ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏՅԱՆ»-Ի ԳՐՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սեպտեմբերի 3-8-ը Սուրբ Ղազար կղզում կայացավ «Ցիշատակաւ Կենարարին միշտ ճենճերիմ» խորագիրը կրող և «Մատեան ողբերգութեան» երկի շարադրման հազարամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարությամբ, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, գիտաժողովին իր մասնակցությունն էր բերել Մայր Աթոռի միաբան, Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեսրուհ եպս. Չուլջյանը:

Մասնակիցների թվում էին Եկեղեցիների Միության Վատիկանի գրասենյակի նախագահ Ծիրանավոր Վալտեր Քասբերի քարտուղար Մոնսինյոր Ցոհան Պոննին և Հիսուսյան միաբանության անդամ և Քահանայապետական Արևելագիտական համալսարանի տնօրեն Հ. Հեկտոր Վալլ Վիլլարտելը:

Գիտաժողովի մասնակիցները Ս. Ղազարի միաբանությունում

Դասախոսական կազմի մեջ էր Հիսուսյան միաբանության անդամ Հ. Սահակ Քեշիշյանը, որին պարտական ենք «Մատյան»-ի և վերջերս լույս տեսած Ներսես Լամբրոնացու «Մեկնություն Պատարագի» երկի ֆրանսերեն թարգմանությունների համար:

Դասախոսություններով հանդես եկան պրոֆեսոր Գաբրիելլա Ուլուհոջյանը, Բոլոնիայի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Հ. Իննոչենցո Կարկանոն և Վենետիկի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Հ. Լևոն Զեքիյանը, Մխիթարյան հայրերից՝ Հ. Հովսեփ վրդ. Պեհեսնիլյանը, Հ. Վրթանես վրդ. Ուլուհոջյանը, Հ. Վահան Օհանյանը, Հ. Ներսես Մաքայանը և Հ. Մերոբ Չամուրլյանը:

Սուրբ Ղազար էր ժամանել նաև իտալացի և հայ հոգևորականների ու աշխարհականների մի մեծ խումբ, Մխիթարյան միաբանության հայրեր, հայ և օտարազգի նարեկագետներ:

Այս առիթով Սուրբ Ղազարի Մատենադարանի մեջ կազմակերպվել էր 3 մեծերի՝ Նարեկացու, Շնորհալու և Լամբրոնացու ստեղծագործությունները պարունակող 30 ձեռագրերի ցուցահանդես:

Դասախոսություններին զուգընթաց ներկաները մասնակցեցին ժամերգություններին, ծանոթացան հայ մանրանկարչությանը և Սուրբ Ղազարի վանական համալիրին, Մխիթարյան միաբանության վանական կյանքին:

Մաեստրո Պերճ Ժամկոչյանի երգեհոնային համերգի ընթացքում գիտաժողովի մասնակիցները վայելեցին Յոհան Սեբաստիան Բախի, Անտոնիո Վիվալդիի, Սեզար Ֆրանքի և Ջեֆրի Պրոտիի ստեղծագործությունները:

Գիտաժողովի փակման օրը՝ սեպտեմբերի 8-ին, Մխիթարյան միաբանության Ընդհանրական աբբահայր Հոգեշնորհ Հ. Եղիա ծ. վրդ. Քիլաղպյանի կողմից Ս. Ղազար կղզում մատուցվեց հանդիսավոր աբբայական Ս. Պատարագ, որին ներկա էին ոչ միայն հրավիրյալները, այլև հարյուրավոր հայ և օտար հավատացյալներ:

ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋԵԱՆ
Գուգարաց թեմի առաջնորդ